



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում /վերլուծություն/

2003թ. 11 ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 63864 գործարքներ, որոնց քանակը 2002թ. 11 ամիսների համեմատ աճել է 15.6%-ով: 2003թ. 11 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. 11 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. 11 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. 11 ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 28697 օտարման գործարքների 90.8% կազմել են առուվաճառքները, 8.7%՝ նվիրատվությունները և 0.5%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 47.7%-ը արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 50.2%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. 11 ամիսներին 2002թ. 11 ամիսների համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 16.6%-ով: 2003թ. 11 ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 12226 առուվաճառքի գործարքների 68.9%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում 2002թ.

11 ամիսների համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.0%-ով:

2003թ. 11 ամիսներին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլարով/	
		11 ամիսներ 2003թ.	11 ամիսներ 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	382.1	272.4
Արաբկիր	150.0-550.0	275.9	171.2
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	167.3	105.8
Նոր-Նորք	90.0-240.0	134.1	97.6
Ավան	90.0-190.0	130.0	86.8
Էրեբունի	80.0-300.0	143.0	96.5
Շենգավիթ	80.0-250.0	141.7	97.2
Դավթաշեն	100.0-250.0	165.1	96.5
Աջափնյակ	80.0-220.0	143.4	92.1
Սյալթիա-Սեբաստիա	90.0-240.0	139.4	92.9
Նուբարաշեն	40.0-100.0	62.7	43.5
Երևան	<b>40.0-970.0</b>	<b>171.3</b>	<b>113.9</b>

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. 11 ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները 2002թ. 11 ամիսների համեմատ աճել են 50.4%-ով:

2003թ. 11 ամիսներին հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. 11 ամիսներին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 4327 բնակարաններ, որոնց քանակը 2002թ. 11 ամիսների համեմատ աճել է 7.3%-ով:

2003թ. 11 ամիսներին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/	
			11 ամիսներ 2003թ.	11 ամիսներ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.3	57.1
	Ապարան	18.0-38.0	27.2	25.5
	Թալին	18.0-38.0	24.8	21.0
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	54.1	51.7
	Մասիս	20.0-85.0	54.2	49.6
	Վեդի	20.0-45.0	31.3	28.5
	Արարատ	22.0-40.0	31.4	27.3
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	83.3	71.9
	Արմավիր	21.0-78.0	45.1	41.0
	Մեծամոր	17.0-50.0	30.7	28.6
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	29.3
	Գավառ	20.0-55.0	30.1	28.8
	Սարտունի	18.0-55.0	29.3	27.8
	Վարդենիս	12.0-21.0	17.1	16.1
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	60.6	56.8
	Ստեփանավան	20.0-55.0	32.8	28.0
	Սյիտակ	17.0-43.0	23.8	21.7
	Ալավերդի	17.0-50.0	25.3	22.5
	Տաշիր	15.0-26.0	19.2	17.7
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	83.0	76.2
	Նոր Հաճն	35.0-75.0	51.7	49.8
	Բյուրեղավան	17.0-48.0	35.1	32.2
	Եղվարդ	28.0-55.0	40.3	36.3
	Հրազդան	18.0-65.0	30.4	27.5
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.3	71.5
	Չարենցավան	13.0-55.0	30.8	27.3
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	69.5	60.1
	Արթիկ	17.0-48.0	25.1	22.8
	Մարայիկ	15.0-45.0	23.4	20.5
Սյունիք	Գորիս	21.0-46.0	29.4	26.3
	Կապան	18.0-55.0	28.8	25.1
	Միսիան	17.0-57.0	27.4	23.8
	Մեղրի	15.0-30.0	25.1	22.8
	Քաջարան	15.0-48.0	18.2	14.9
	Վայք	20.0-58.0	35.1	30.6
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	20.0-55.0	46.5	43.8
	Ջերմուկ	15.0-55.0	40.8	37.1
	Դիլիջան	23.0-50.0	36.1	31.3
Տավուշ	Իջևան	15.0-45.0	40.2	38.2
	Բերդ	15.0-45.0	29.0	26.3
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.7	24.3

2003թ. 11 ամիսների ընթացքում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը 2002թ. 11 ամիսների համեմատ կազմել է 10.0%:

2003թ. 11 ամիսներին, մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 4041 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1056, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2985: 2002թ. 11 ամիսների համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 26.5%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 14.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 31.6%-ով: Ընդ որում 2003թ. 11 ամիսներին հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. 11 ամիսներին անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
		11 ամիսներ 2003թ.	11 ամիսներ 2002թ.
Կենտրոն	200.0-990.0	388.2	278.5
Արաբկիր	160.0-580.0	279.0	172.3
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	169.1	108.0
Նորք-Մարաշ	120.0-240.0	292.8	225.4
Ավան	95.0-200.0	131.2	97.0
Էրեբունի	95.0-320.0	144.1	104.3
Շենգավիթ	85.0-260.0	142.7	98.8
Դավթաշեն	100.0-260.0	166.1	97.7
Աջափնյակ	85.0-230.0	144.5	95.7
Մալաթիա-Սեբաստիա	95.0-250.0	140.5	98.2
Նուբարաշեն	45.0-110.0	64.8	45.9
<b>Միջինը Երևանում</b>	<b>45.0-990.0</b>	<b>187.5</b>	<b>128.7</b>

◆ Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսյին պողոտայի վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված չեն:

◆ Աջափնյակ համայնքի տվյալներում Վահագնի թաղամասի վերաբերյալ տեղեկությունները ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. 11 ամիսներին առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները 2002թ. 11 ամիսների համեմատ աճել են 45.7%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. 11 ամիսներին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/	
			2003թ. 11 ամիսներ	2002թ. 11 ամիսներ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	82.3	75.8
	Ապարան	20.0-45.0	38.5	34.5
	Թալին	15.0-35.0	28.0	23.3
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	61.5	56.9
	Մասիս	27.0-80.0	62.1	58.7
	Վեդի	25.0-60.0	36.1	34.2
	Արարատ	25.0-60.0	37.1	33.9
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	87.9	75.5
	Արմավիր	35.0-90.0	51.9	46.9
Գեղարքունիք	Մեան	25.0-60.0	36.3	33.7
	Գավառ	25.0-65.0	39.7	36.9
	Մարտունի	20.0-55.0	33.7	31.1
	Վարդենիս	15.0-45.0	21.0	18.8
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	68.0	63.7
	Ստեփանավան	20.0-50.0	33.2	31.5
	Սյիտակ	17.0-50.0	24.0	22.2
	Ալավերդի	18.0-50.0	25.8	23.7
	Տաշիր	15.0-30.0	19.7	18.4
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	91.8	86.6
	Նոր Հաճն	35.0-80.0	54.0	50.5
	Բյուրեղավան	15.0-50.0	38.0	33.6
	Եղվարդ	23.0-70.0	47.0	42.5
	Հրազդան	25.0-65.0	39.7	36.2
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.8	81.8
	Չարենցավան	25.0-50.0	33.2	30.2
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	89.8	84.7
	Արթիկ	18.0-55.0	28.3	24.6
	Մարայիկ	15.0-45.0	23.8	21.7
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.3	27.6
	Կապան	25.0-55.0	30.7	27.5
	Միսիան	18.0-50.0	28.3	25.3
	Մեղրի	18.0-40.0	28.2	23.4
	Քաջարան	15.0-30.0	19.0	16.0
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.7	32.3
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.9	46.3
	Ջերմուկ	25.0-60.0	42.9	38.9
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.0	36.2
	Իջևան	30.0-70.0	40.9	39.2
	Բերդ	20.0-50.0	30.7	27.2
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.7	27.0

2003թ. 11 ամիսների ընթացքում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների աճը 2002թ. 11 ամիսների համեմատ կազմել է 9.2%:

2003թ. 11 ամիսներին, մարզերում արձանագրվել են հողերի օտարման 5966 գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 1167: 2002թ. 11 ամիսների համեմատ հողերի օտարման գործարքների քանակն աճել է 56,8%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 2,2 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 46,2%-ով:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում 2003թ հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում օտարվել են 2602.23 հա /165.26 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 2211.75 հա գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում, 2551.91 հա /162.16 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի, որից 2180.02 հա գյուղատնտեսական նշանակության, 45.88 հա /2.43 հա Երևանում/ նվիրատվության, որից 28.98 հա գյուղատնտեսական նշանակության և 4.44 հա /0.67 հա Երևանում/ փոխանակման, որից 2.74 հա գյուղատնտեսական նշանակության, գործարքներ:

Առավել մեծ մակերեսով հողեր են վաճառվել Արմավիրի մարզում՝ 504.07 հա, որից 484.56 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 9.56 հա, Տավուշի մարզում, որից 8.66 հա գյուղատնտեսական նշանակության:

Ստորև ներկայացվում է 2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	304	22.60	220	76.76	0	0.00	471	31.78	113	23.53
Արագածոտն	71	69.39	40	4.91	0	0.00	279	189.58	112	11.81	5	0.50
Արարատ	12	47.53	70	7.19	11	1.28	790	260.55	276	23.43	5	0.13
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	490	484.56	171	16.97	19	2.54
Գեղարքունիք	23	160.80	1	1.00	6	4.80	183	320.97	65	7.72	3	2.41
Լոռի	0	0.00	14	1.33	0	0.00	149	123.62	20	3.11	6	0.95
Կոտայք	27	16.14	311	28.19	6	15.41	465	179.54	485	47.16	7	3.75
Շիրակ	0	0.00	1	0.04	2	0.17	218	235.48	59	3.09	8	0.27
Սյունիք	1	1.00	0	0.00	0	0.00	41	33.91	9	0.90	1	0.40
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	5	3.14	51	48.30	11	1.01	2	0.70
Տավուշ	0	0.00	0	0.00	4	0.10	16	8.66	12	0.77	1	0.01
<b>Ընդամենը</b>	<b>134</b>	<b>294.86</b>	<b>741</b>	<b>65.26</b>	<b>254</b>	<b>101.66</b>	<b>2682</b>	<b>1885.17</b>	<b>1691</b>	<b>147.75</b>	<b>170</b>	<b>35.19</b>

2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել են հողերի 5705 առուվաճառքի գործարքներ, որից 2816-ը՝ գյուղատնտեսական, 2860-ը՝ բնակավայրերի, 29-ը՝ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. հունվար - նոյեմբեր ժամանակահատվածում հողերի առուվաճառքներից 802-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 217-ը՝ /34.75 հա/ Երևանում, իսկ 585-ը՝ /344.32 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 134 միավորը /294.86 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական, 617-ը /53.40 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 48-ը /29.26 հա/ հասարակական

կառուցապատման և 3-ը /1.55 հա, Կոտայքի մարզում/ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. հունվար- նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում վաճառված 29 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 3 միավորը գրանցվել է /11.27 հա/ Արարատի, 4-ը` /1.46 հա/ Գեղարքունիքի, 6-ը` /1.77 հա/ Կոտայքի, 1-ը` Տավուշի /0.04 հա/ մարզերում և 15-ը` /6.88 հա/ Երևանում: 2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարքներ /8-ը` Երևանում, 1-ը` Արարատի մարզում/:

2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 2816, այդ թվում աճուրդ-վաճառքների 134 և դատարանի վճռով 15 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Ֆանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Ֆանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	71	69.39	130.0	1960.0	1210.0	226	88.88	840.0	7600.0	2355.0
Սպարան						18	11.30	130.0	1150.0	320.0
Թալին						27	63.45	200.0	1680.0	340.0
Ծաղկահովիտ						8	25.95	170.0	2100.0	285.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	12	47.53	130.0	1180.0	323.0	420	115.69	740.0	10000.0	2060.0
Մասիս						117	37.12	400.0	5600.0	1015.0
Վեդի						249	106.87	450.0	7200.0	1155.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						137	94.69	650.0	4650.0	1240.0
Բաղրամյան						131	256.41	130.0	1000.0	395.00
Վաղարշապատ						219	131.80	980.0	11150.0	2070.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	1	10.0	145.0	145.0	145.0	14	4.68	420.0	1100.0	625.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի	1	3.00	360.0	360.0	360.0	3	0.90	100.0	4000.0	490.0
Սևան						1	0.25	100.0	1000.0	400.0
Վարդենիս	21	147.80	362.0	364.0	363.0	165	315.14	60.0	1180.0	225.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						39	25.77	360.0	5500.0	800.0
Գուգարք						12	3.19	500.0	6000.0	1140.0
Սպիտակ						3	1.48	500.0	3300.0	1055.0
Ստեփանավան						55	50.30	180.0	4000.0	325.0
Տաշիր						32	39.66	100.0	400.0	238.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	15	5.67	95.0	1445.0	577.0	210	66.32	520.0	10100.0	4035.0
Եղվարդ	10	10.00	414.0	825.0	570.0	209	85.01	380.0	6100.0	2120.0
Հրազդան	2	0.46	880.0	880.0	880.0	46	28.20	250.0	4000.0	705.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						169	141.19	550.0	760.0	650.0
Ամասիա						17	44.25	80.0	525.0	210.0
Անի						24	43.44	240.0	800.0	275.0
Աշոցք						3	2.03	60.0	210.0	130.0
Արթիկ						5	4.57	140.0	2300.0	380.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան	1	1.00	256.0	256.0	256.0	1	1.76	120.0	2000.0	330.0
Մեղրի						3	0.82	400.0	4240.0	874.0
Սիսիան						37	31.33	90.0	1500.0	245.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						37	25.43	260.0	4000.0	1055.0
Վայք						14	22.87	120.0	3400.0	435.0
Տավուշի մարզ										
Բերդ						8	5.10	100.0	2000.0	460.0
Իջևան						5	1.59	530.0	4000.0	1105.0
Նոյեմբերյան						3	1.96	100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 1657 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 435, ուղղակի վաճառքի 2 և դատարանի վճռով 1 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	40	49075.0	44.0	64.0	63.0	105	105830.0	120.0	3800.0	2245.0
Ապարան						5	10140.0	120.0	670.0	310.0
Թային						2	2090.0	78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	36	38500.0	88.0	1060.0	395.0	62	57802.0	175.0	2460.0	650.0
Մասիս	34	33405.0	110.0	342.0	132.0	166	127720.0	270.0	3680.0	800.0
Վեդի						48	48814.0	115.0	1000.0	495.0



Արմավիրի մարզ										
Արմավիր						44	46661.0	180.0	2440.0	740.0
Բաղրամյան						6	8000.0	120.0	280.0	200.0
Վաղարշապատ						121	115048.0	280.0	3700.0	1265.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						21	24094.0	180.0	1000.0	520.0
Ճամբարակ	1	10000.0	112.0	112.0	112.0	3	3600.0	78.0	180.0	140.0
Մարտունի						40	48595.0	120.0	320.0	225.0
Սևան						1	950.0	120.0	1000.0	240.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի						2	5900.0	78.0	440.0	200.0
Գուգարք						10	15716.0	78.0	3800.0	665.0
Սյիտակ	9	11250.0	77.0	77.0	77.0	1	1530.0	78.0	450.0	160.0
Ստեփանավան	5	2000.0	103.0	103.0	103.0	6	7102.0	78.0	340.0	140.0
Տաշիր						1	840.0	78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	87	71865.0	27.0	943.0	158.0	285	260992.0	180.0	4300.0	1435.0
Եղվարդ	219	203800.0	67.0	305.0	158.0	168	185991.0	180.0	3670.0	1720.0
Հրազդան	4	4800.0	109.0	111.0	110.0	31	24123.0	180.0	4120.0	1300.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						56	27966.0	120.0	2500.0	325.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի						2	2512.0	120.0	430.0	185.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ						1	400.0	120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս						6	5920	78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	410.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Միսիան						3	3080.0	78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						10	9552.0	78.0	990.0	300.0
Վայք						1	500.0	78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան						12	7660.0	78.0	1600.0	510.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

2003թ. 2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 100 գործարքներ 117.79 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 9-ը՝ Երևանում /0.44 հա/, 36-ը՝ Արարատի /12.13ա/, 14-ը՝ Արմավիրի /36.00 հա/, 9-ը՝ Գեղարքունիքի /9.56 հա/, 17-ը՝ Շիրակի /50.23 հա/, 2-ը՝ Սյունիքի /0.40 հա/, 5-ը՝ Վայոց Ձորի /1.54 հա/ և 8-ը՝ Տավուշի /7.49 հա/ մարզերում:

2003թ. 11 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5541 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.7%-ը: 2002թ. 11 ամիսների համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 5.7%-ով: Ընդ որում վարձակալության գործարքների 31.0%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2003թ. 11 ամիսներին հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. 11 ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 375 բնակարանների, 123 բնակելի տների, 1354 հասարակական, 115 արտադրական նշանակության օբյեկտների, 13 ավտոտնակների, 1 այգետնակի և 3560 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. 11 ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 828 վարձակալության գործարքների քանակները 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 7.8%-ով:

2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում վարձակալվել են 21125.30 հա ընդհանուր մակերեսով հողեր /277.48 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 19825.77 հա կազմում են գյուղատնտեսական /որից 1742.77 հա նախկին պահուստային/, 764.04 հա բնակավայրերի, 0.15 հա տրանսպորտային, 2.00 հա անտառային, 255.87 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 6513.88 հա, որից 6410.35 հա գյուղատնտեսական նշանակության: Իսկ առավել փոքր մակերեսով հողեր են վարձակալվել Տավուշի մարզում՝ 179.07 հա, որից 166.90 հա գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 8308.82 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	10	1156.00	199	1459.14
Արարատ	22	4724.00	324	1686.35
Արմավիր	0	0.00	192	1881.72
Գեղարքունիք	23	1785.90	332	3016.37
Լոռի	5	139.00	75	220.57
Վոտայք	4	320.00	285	754.38
Շիրակ	1	80.00	187	1595.85
Մյունիք	5	103.92	101	467.86
Վայոց Ձոր	0	0.00	73	267.80
Տավուշ	0	0.00	47	166.90
<b>Ընդամենը</b>	<b>70</b>	<b>8308.82</b>	<b>1815</b>	<b>11516.94</b>

2003թ. 11 ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4209 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.6%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. 11 ամիսների համեմատ աճել է 44.5%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 37.0%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից, իսկ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /39.1%, հասարակական նշանակության օբյեկտների /19.2%, առանձնատների /13.1%/ և հողերի /23.4%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2041 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. 11 ամիսների համեմատ աճել է 30.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում հանրապետությունում գրավադրվել են 1050.66 հա մակերեսով հողեր /5.44 հա Երևանում/, որից 1041.01 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 530.95 հա, որից 528.19 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2003թ. 11 ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 257 և 68 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.5%: 2003թ. 11 ամիսներին հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. երկրորդ եռամսյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը 2002թ. 11 ամիսների նվազել է 37.5%-ով: 2003թ. 11 ամիսներին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 31.1%:

2003թ. 11 ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 9048 գործարքներ, որոնց քանակը 2002թ. 11 ամիսների համեմատ աճել է 6.7%-ով:

Առաջնային գրանցումների տեսակարար կշիռը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.2%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /44.2%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

## ***ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն***